

ղաքը կը խնայւին. Իյադ ասաց՝ «Երկիրը մերն է, որովհետեւ մենք նւաճել ենք եւ գրաւել այն»,¹ նա թողեց երկիրը բնակչաց ձեռքում՝ իրեն հարկ (الخراج) տալու պայմանով. նա արտաքսեց այն քրիստոնեաներին եւ Հրէաներին, որոնք ոչինչ չկամէին վճարել, սակայն սոքա թողին իրենց գոյքը մուսլիմներին՝ ¹/₁₀ մասը (նոցա տալու) պայմանով: Իյադ գլխահարկ (الجزية) դրեց բնակչաց ստրուկների վերայ եւ պարտաւորեցրեց նոցանից ամէն մէկին տարեկան մի դենար վճարել (ի բաց առնելով կանայք եւ երեխայք). բացի մի դենարից նա դրեց նոցա վերայ եւս մի քանի +—ի— ցորեն, մի քիչ ձիթ-ենւոյ իւղ, գինի եւ մեղր. երբ Մուսուխայ կառավարեց, նա շինեց այս բոլորը գլխահարկ:¹

Բնակիչք բաց արին քաղաքի դռները, եւ երբ նոքա կանգնած էին մուսլիմների հանդէպ հրապարակում, Ուսայի դրանց առջեւ, Իյադ դրեց նոցա հետեւեալն՝

«Յանուն Աստուծոյ ամենագթատերի եւ ամենաողորմածի. այսու շնորհեց Իյադ Ի. Ղանմ Ռաբբայի բնակչաց այն իսկ օրը, երբ նա քաղաք մտաւ, ապահովութիւն՝ նոցա կենաց, գոյքի եւ եկեղեցեաց նկատմամբ, որ սոքա չպէտք է աւերին եւ ոչ արհամարին, մինչեւ որ բնակիչք հարկ կը վճարեն, որ նոցա վերայ կը ծանրանայ, եւ ոչ մի միսս չեն հասուցանէ (մուսլիմներին). բայց նոքա չպէտք է շինեն (նոր) եկեղեցիք եւ (Հրէից) տաճար, չպէտք է գործադրեն փայտէ տախտակներ»²

¹ Այստեղ ջիզեայ (جزيه) բառի հնագոյն նշանակութիւնն իբրեւ դրամական գլխահարկ՝ պարզ է. դորա հակառակն՝ խարաջ (خراج) դեռ հնումն աւելի ընդհանուր նշանակութիւն պէտք է ունենար, իբրեւ երկրի, հողի, տնտեսարակ քնակն հարկ:

² Հնումն եւ այժմ էլ Հայերի մէջ շատ տեղերում «ժամկոչը» զանգակատան վերայ կանգնած՝ փայտէ տախ-